

բայի Տան, որ ամենայն պատրաստակամութեամբ ընդառաջ եկաւ զխտական ձգտումներուս. յանձնեց այս առթիւ նաեւ կազմել համառօտ ցուցակ մը ձեռագիրներուս: Երկու ամիս զբաւեց ինձմէ այս աշխատանքը. երբ ես հետամուտ եղայ նաեւ հաւաքել կարեւոր գրքեր եւ լրագիրներ:

Մտադիր էի Մոսկուայէն անցնել Լեւինդրազ, հետագոտելու զխտութեանց ձեմարանի եւ Ասիական Մուսէոնի հայկական ձեռագիրները: Բայց այլ եւ այլ հանգամանքներ ստիպեցին զիս յետաձգել խորհուրդս. եւ ես շարունակեցի ճանապարհս զէպի Նիժնի-Նովգորոզ—Կազան—Սամարա—Սարաթով—Վրասնոզար—Արմաւիր—Րոստով—Նախիջևեան—Կրասնոզար—Նոփորատիսկ—Թէոդոսիա—Բաթում—Թիֆլիս—Երեւան:

Այս երկար զիծը բռնեցի խոյս տալու համար Հայաստանի տօթագին եղանակէն, մի եւ նոյն ժամանակ հատուցանելու սիրոյ պարտքս Մօրս եւ Հարազատներուս, որոնք հաստատուած էին այս ճանապարհի վրայ. եւ որոնելու թերթեր եւ գրքեր, որոնք թերեւս կորուստէ պահուած լինէին այս հեռուոր կողմերը. կը յուսայի մանաւանդ Ձեռագիրներու պատահիլ ի Նոր-Նախիջևեան: Յուսախար եղայ սակայն վերջին կէտիս մէջ. Ձեռագիրները փոխադրուած էին Երեւան, Ե. Շահազիզի խնամքով:

Հոկտեմբեր 1ին հասայ Երեւան: Բնակարանային տաղնապը մեծ էր քաղաքիս մէջ. եւ ես ստիպուած զգացի ինք զինքս զիմել Լուս(աւորութեան) Ժող(ովրդական) Կոմ(իսարե)ատ, վստահ թէ ելք մը ցոյց կը տրուի ինձ այս տեղ: Լուսժողովի օգնական Եաղուբեան ազնուօրէն առաջնորդեց զիս Առաջին Ժողովրդական Տունը, ուր երկու շաբաթ մնացի որպէս հիւր, մինչեւ որ յաջողեցաւ ինձ հայրենակցի մը քով գտնել բնակարան:

Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատ ամենայն բարեացակամութեամբ բացաւ իմ առջեւ Պետական Թանգարանի ձեռագիրներու բաժինը: Երուանդ Շահազիզն էր Բաժնիս վարիչը, որ ընծայեց ինձ ամէն զիւրութիւն ուսումնասիրութեանցս համար:

Երեւանի Հաւաքածոյքը ունէր 1100 ձեռագիր, ասոր բաղկացուցիչ մասերն էին Նոր-Նախիջևեանի, Ներսէսեան Դպրանոցի, Սանասարեան Վարժարանի, Տիգրիսի Ազգա-

գրական եւ Բագուի Մարդասիրական Ընկերութիւններու ձեռագիրները, ճոխացած մասնաւորներու նուէրներով եւ Լուսժողովմատի զնուումներով: 1924 Հոկտ.—1925 Նոյեմբեր պարապած էի Հաւաքածոյիս ուսումնասիրութեամբ: Լուսժողովմատի յանձնարարութեամբ կազմեցի այս առթիւ նաեւ առ ձեռն ցուցակ մը Ձեռագիրներուս բովանդակութեան, զիւրացնելու անոնց օգտագործումը բանասէրներուն:

1925 Նոյեմբերին փոխադրուեցայ Էջմիածին, ուր խնդրանօքս արամադրեց ինձ Լուսժողովմատ առանձին սենեակ մը վանքի Կացարանի մէջ, ի մերձաւորութեան Մատենադարանին:

Լուսժողովմատի այս բարեացակամ եւ ազնուական վերաբերմունքը, զոր ես վայելեցի այնքան առատօրէն Հայաստան անցուցած չորս տարիներուս մէջ, յաւէտ երախտապարտ պիտի թողու զիս հանդէպ Սորհ. Հայաստանի Կառավարութեան: Նա ոչ միայն աննախանձարար բացաւ իմ առջեւ Ձեռագրատունները եւ բարձր գնահատեց զբրական պրպտումներս, այլ եւ նպաստամատոյց եւ քաջալեր եղաւ ինձ բարոյսպէս եւ նիւթապէս ամէն զժուարութիւններուս մէջ:

Շնորհակալութեան զգածումներով պիտի յիշեմ այս տեղ նաեւ Վեհափառ Հայրապետին հայրական ընդունելութիւնը, որ ոչ միայն իբրեւ հիւր Միաբանութեան ասպրնջականեց զիս Էջմիածին անցուցած պանդխտական օրերուս, այլ եւ առիթ ընծայեց այսու բովանդակ Միաբանութեան արտայայտելու համակարիք սէր եղբայրական խնամքով: Իմ յաշերուս մէջ անմոռանալի պիտի մնայ մասնաւորապէս բանասէր եւ մեղուաջան բարեկամիս, Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանի եղբայրական խնամածութիւնը, անձնուէր եւ անչափ սիրալիր:

Էջմիածնի Պետական Ձեռագրատան վարիչն էր Սենեքերիմ Տէր-Յակոբեան, ծանօթ ինձ իր ուսանողական շրջանէն, որ դուրս գլուրանքով կը խնամէր ձեռագիրները: Յընթացս իմ երեքամեայ զեզերումներուս նախնեաց գրչագիրներու մէջ պատուական վարիչս անձնուիրաբար զիւրացուց ինձ աշխատանքներս:

Գտայ հոս 7000 ձեռագիր, զետեղուած երկաթեայ պահարաններու մէջ: Հիմնական մասը հին Հաւաքածոյքն էր. որ այժմ եռապատուած է նոր ստացումներով՝ գրասէր

հոգատարութեամբ Գէորգ Դ. եւ յաջորդ Կաթողիկոսներու, որոնք Էջմիածին համարած են Տաթևի եւ այլ հին վանքերու եւ կիկղեցիներու ձեռագրական հաւաքածոյքները: Վերջին շրջանին բերուած են հոն նաեւ Վասպուրականի ձեռագիրները (մօտ 2000) որոնց ապա կցած է Լուսժողովմատ Սաչիկ Վ. Գաղեանի, Գարեգին Արքեպ. Յովսէփեանի, Լազարեան ձեմարանի, Սեւանի վանքի ձեռագրական հաւաքածոյքները, եւ այլ մասնաւոր սեպհականութիւններ: Ձեռագրատունս պիտի կենդրոնացուին նաեւ Երեւանի ձեռագիրները. որով Հաւաքմանս ընդհանուր թիւը պիտի կազմէ աւելի քան 8000 ձեռագիր:

Այս ծովատարած ընդարձակութիւնը կտրել անցնելու համար հարկ էր ամբապնդել ջղերը եւ օգտագործել թանկագին ժամանակը: Լուսժողովմատ Ս. Մուսեան ըրաւ ինձ առ այս բացառապէս զիջողութիւնը, վերցնել ձեռագիրները նաեւ սենեակս, երեկոյեան աշխատանքներու համար: Այսպէս շաբաթը 6 օր օրական 12—16 ժամ, հազուադէպ ընդհատումով՝ լծուած էի ես ձեռագրական ուսումնասիրութիւններուս: Մոռացած արտաքին աշխարհը՝ կ'ապրէի միջամուխ ձեռագրական աշխարհի մէջ, ողբերգութիւնս կը խրախուսէր եռանդս. գրական նորութիւնները կ'արծարծէին հետաքրքրութիւնս. անյադօրէն նուաճել կը ձգտէի զայն սահմանէ սահման: Միայն շաբաթ երեկոններն ընդհատում կը կրէր թափս, երբ այցելութեամբ կ'ելլէի Երեւան, կիրակնօրեայ հանգիստ շնորհելու խոնջած նեարդներուս:

Աշխատութեանս գլխաւոր նպատակն էր, ինչպէս ակնարկեցի վերադոյն, հաւաքել նիւթեր առ հասարակ Հայ Գաղաքակրթութեան Պատմութեան, բայց մասնաւորապէս Հայոց Մատենագրութեան Պատմութեան վերաբերեալ: Առ այս կարեւոր էր նախ համախմբել ձեռագիրներու բովանդակութիւնը յօրինուածական դասաւորութեամբ, ճշդել մէն մի գրուածքի խորագիրը, սկզբնաւորութիւնն եւ վերջաւորութիւնը, վեր հանել գրութեան հեղինակը, շարժառիթը, ժամանակը, յօրինուածքը, ամբողջութիւնը. մասնաշնչել հնագոյն հարգատապոյն օրինակները. հաւաքել հեղինակներու կեանքի եւ ժամանակի հայոց կենսագրական գծեր, յեցած պատմական ժամանակակից յիշատակարաններու եւ յիշատակագրութիւններու վրայ. եւ ամփոփել

յիշատակարաններու ուղ եւ ծուծը հայ քաղաքակրթութեան պատմութեան լուսարանութեան համար: Նորագիւտ բնագիրներն արտագրել եւ յիշատակարաններն ամբողջութեամբ ներկայացնել՝ որքան ալ ցանկալի էր, բայց եւ այնպէս անհնարին էր ամէն անգամ, ժամանակի սղութեան պատճառաւ: Պէտք էր ունենալ նիւթական միջոցներ՝ կա՛մ լուսանկարչական նմանահանութեամբ եւ կա՛մ ընդօրինակողներու օգնութեամբ ի գլուխ հանելու զայն. եւ այս նութեամբ ի գլուխ հանելու զայն. եւ այս կարելի էր միայն նիւթերու համադրութեանէն նութեամբ եւ կա՛մ ընդօրինակողներու օգնութեամբ: Այսպիսի ամենաճոխ Ձեռագրատոյ: Այսպիսի ամենաճոխ Ձեռագրատան մը լրիւ ուսումնասիրութիւնը եւ նիւթոց արժանաւոր գնահատումը հարիւրաւոր թոյ արժանաւոր կեանքի աշխատանք է. ինձ բանասէրներու կեանքի աշխատանք է. ինձ հարկ էր ընթանալ ձիւնթաց. եւ ցոյց տալ բանասիրութեան միայն մշակելի հողը եւ անոր մշակութեանը ծրագիրները:

Մինչ բուռն թափով կը հետապնդէի հասնիլ նպատակիս, զբաղած էի միաժամանակ կազմել համառօտ գիտական ցուցակ մը Ձեռագիրներուս, յանձնարարութեամբ մը Ձեռագիրներուս, յանձնարարութեամբ Լուսժողովմատի: Այս գործի շուրջը փոքրիկ թիրխմացութիւն մը տեղի ունեցաւ, զոր կարեւոր կը համարեմ բացատրել այս տեղ:

Երբ Երեւանի Պետական Թանգարանի Ձեռագիրները կ'ուսումնասիրէի, համարած էի Լուսժողովմատի հետ կազմել ցուցակ մը ձեռագիրներու բովանդակութեան, այբուբենական դասաւորութեամբ որով իբրեւ հայերոյ մէջ պատկերացուած պիտի լինէր Հաւաքման բովանդակածը: Այս պիտի լինէր Հաւաքման բովանդակածը: Այս ամենամատչելի ձեւը նկատած էի զիւրացումներու բանասէրներուն Հաւաքածոյքիս առ ձեռն օգտագործումը շահագրգռող կէտեւորութեամբ: Այս աշխատանքը հեշտ էր եւ ինձ համար, ոչովհետեւ նոյն յօրինուածքով կ'ընթանային նաեւ իմ աշխատանքներս: Այսպէս կը ցանկէի նաեւ Էջմիածնի Ձեռագրատունը: Մինչեւ 1926 Ապրիլ ուսումնասիրատունը: Մինչեւ աւելի քան 600 ձեռագիր, սիրած էի արդէն աւելի քան 600 ձեռագիր, երբ Լուսժողովմատ առաջարկեց կազմել համարական ցուցակագրութիւն, իւրաքանչիւր ձեռագիր իր մէջ, ըստ ընդունուած ձեւի. նպատակ ունենալով յանձնել զայն ապա տպագրութեան: Գժուարին եւ ծանր աշխատանք էր այս, պիտի կասեցնէր արագ աշխատանք էր այս, պիտի կասեցնէր արագ աշխատանք. ոչ անհրաժեշտ մի եւ նոյն ժամանակ, քանի նման աշխատանք մը տարած էր Մեսրոպ Արքեպիսկոպոս Տէր-Մովսէ-

սեան, առաւել կամ նուազ յաջողութեամբ: Չուզելով սակայն ընդդիմանալ Լուսժողով-մատի կամքին, յանձն առի կողմել «Համա-նօտ գիտական ցուցակ Չեռագիրներու», կարճատեւ նկարագրութեամբ արտաքնոյն, լրիւ բայց սեղմ ցուցակագրութեամբ բովանդակութեան, մատնանշելով բայց ոչ արտագրելով յիշատակարան - յիշատակագրութիւնները: Այսպիսի սեղմեալ ուրուագծով միայն հնարաւոր էր խոստանել 8000 ստուար հատորներու ցուցակը մատչելի տարածութեան մէջ եւ ակնկալել անոր տպագրութիւնը ներկայ պայմաններուն: Բայց նաեւ ասով չէր կարճուեր աշխատանքը, ընդհակառակը կը բարդուէր, ըստ որում համանիւթ գրութիւնները պէտք էին մանր ճշգրտել եւ դէպի հնագոյն օրինակներն առաքուել: Թէեւ պայմաններու մասին շատ ուշ (1927 Հոկտ.) համաձայնութիւն կայացուեցաւ, բայց սկիզբ եղած էր ցուցակագրութեան արդէն 1926 Ապրիլին: 1928 Ապրիլ 1ին աշխատանքիս յանկարծական դադարումը շատ բացեր թողուց հոն:

Հայաստանի տօթագին ամառը անհնարին կ'ընէր պարագմունքները Չեռագրատան մէջ: Այս պատճառաւ ալ հարկ էր հեռանալ բարեխառն միջավայրեր: Անխուհեմ փորձս 1927ի ամառը շարունակել աշխատանքներս էջմիածին, սպառնաց ի սպառ դադարեցնել ամէն պարագմունք. ջերմը տիրացաւ խոնջած անձիս եւ խլեց ինձմէ 6 ամիսներ:

Ամառնային ամիսները կ'օգտագործէի ծանօթանալու երկրին հնութիւններուն, մասնաւորներու սեպհական ձեռագիրներու եւ հաւաքելու գրքեր:

1925 ամառն ի Տփղիս տրամադրեց ինձ աղնուօրէն Սմբատ Տէր-Աւետիսեան իւր կողմած Յուզակը Նոր-Չուղայի Չեռագիրներու (մօտ 500 ձեռագիր). ուսկից քաղեցի չահեկան նորութիւններ: Նոյն տարին Ախլալիս գտայ մասնաւորներու քով աւելի քան 200 ձեռագիր: Յաջորդ ամառը Լուսժողովոմատ բարի գտնուեցաւ յանձնարարել զիս Վրաստանի Լուսժողովոմատին, ուսումնասիրելու Վրաստանի հայերէն ձեռագիրները: Դժբախտաբար սակայն չյաջողեցաւ ինձ այս փափագս, որովհետեւ Եկեղեցիներէն հաւաքուած գրչագիրները դեռ չէին համախմբուած Մատենադարանի մը մէջ:

Վերագոյն յիշատակեցի իմ ուղեւորութեան երկրորդ նպատակը՝ հաւաքել Մխիթարեան Մատենադարանի համար գրքեր եւ թերթեր: Համաշխարհային պատերազմը խղած էր մեր յարաբերութիւնը Ռուսաստանի հայկական կենդրոններու հետ: Պատերազմէն յետոյ ալ երկրին քաղաքային կոիւնները եւ ստեղծուած անկանոն կացութիւնը նուազ չափով միայն փոխած էին իրաց դրութիւնը: Այս պատճառաւ ալ Մխիթարեան Մատենադարանը իւր Հաւաքածոյքին մէջ կրած էր մեծ ընդհատութիւն: Այս պակասը ըստ հնարաւորութեան լրացնելու համար, Մատենադարանի Վարչութիւնը գրաւ վրաս պարտականութիւնը, ուղեւորութեանս ընթացքին առանձին խնամքով հետապնդել անցեալ շրջանի, յատկապէս 1914—1924 տարիներու հայկական եւ հայագիտական հրատարակութիւնները:

Առաջին անգամ Մոսկուա գրացի յանձնառութեանս դժուարութիւնները եւ պատասխանատուութիւնը: 1918/1922 շրջանի քաղաքային կոիւնները, կուսակցական ընդհարումները եւ սովը շատ բան ջնջած, անհետացուցած էին: Դժուարին էր մանաւանդ կազմել թերթերու Հաւաքածոյքը: Ամէն հայաբնակ քաղաք եւ ամէն կուսակցութիւն իւր օրաթերթն ունեցած է: Եթէ դժուարին էր առ հասարակ թերթերն հաւաքել, աւելի դժուարին էր թերթերու անունները վերհանել: Սակայն եւ այնպէս հարկ էր ստանց յուսահատելու սկսել հետախուզութիւնը: Ծնորհակալութեամբ պիտի յիշեմ որ առ այս ամէն տեղ դտայ յօժար կամք եւ սիրալիր պատրաստակամութիւն. Մխիթարեան անունը հմայել էր. գրամով ջանքերս կը խրախուսուէին ամէնէն: Մասնաւորապէս ընդառաջ եկան ինձ պետական Հիմնարկութիւնները, որոնք ամենայն առատաձեռնութեամբ բացին դրապահատները եւ տրամադրեցին ինձ իրենց հին եւ նոր հրատարակութիւնները: Հաւաքեցի շատ բան. բայց շատ բան ալ մնաց անգիտ, մանաւանդ զանազան քաղաքներ կարճատեւ տեւողութեամբ լոյս տեսած օրաթերթերը. այսպիսիք շատ անգամ հրատարակութեան վայրին մէջ իսկ անծանօթ էին, գոնէ ներկայ սերնդեան: Եղան թերթեր, որոնց համարներն հնարաւոր եղաւ լրացնել օրերով իրարմէ տարանջատ քաղաքներու մէջ որոնումներով: Այսպէս կամ այնպէս, յընթացս

քառամեայ դեգերումներու հաւաքեցի մօտ 10.000 հատոր՝ գիրք եւ լրագիր, ձեռք բերած կամ որպէս նուէր, կամ փոխանակութեամբ գրոց եւ կամ գնմամբ¹. ասոնց թուին մէջ նաեւ 50 ձեռագիր:

Հաւաքմանս մի մասն երկու արկղով փոխադրած էի Վիեննա 1926ին: Հինգ արկղ եւս պատրաստ կը սպասէին ճանապարհներու բացման:

*

Այսպէս գեղեցիկ սկիզբով կ'ընթացանային աշխատանքներս յառաջ, երբ (Մարտ 15) յայտնուեցաւ ինձ Լուսժողովոմատի կամքը, վերջ տալ ցուցակագրութեան ձեռագրաց ամսոյն վերջը: Այսու կը դադարէր նաեւ այն նպատակը, զոր իբրեւ ամսաՎճար կը հատուցանէր Կառավարութիւնը գրական ծառայութեանցս համար (1925 Մարտ—1927 Հոկտ.՝ ամսական 50—57 ռուբլի եւ Նոյ.—1928 Ապրիլ՝ 120 ռ.): Յուզակագրութեանս դադարումը մօտ էր սրտիս որովհետեւ յոյժ յոգնեցուցիչ էր եւ կասեցնող խուզարկու քայլերուս: Ապրիլ 1էն սկսեալ՝ ազատ ամէն պարտաւորութենէ՝ բոլորանուէր անձնատուր էի գրական որոնումներուս: Այս ընթացքով յոյս ունէի վերջացնել մնացեալ 4000 ձեռագիրներու քննութիւնը առ նուազն մէկ տարուայ մէջ: Պէտք պիտի ըլլար այնուհետեւ տարեւոր ժամանակ մ'ալ նուիրել հիւթերու դասաւորութեան, վերստուգումներու, կարեւոր բնագիրներու արտագրութեան եւ լուսանկարչական աշխատանքներու:

Բայց մարդ կը խորհի եւ Աստուած կը կարգադրէ: Չեռքի տակ ունէի Չեռագրատան 3200ի շարքը, երբ Ապրիլ 28, առ. ժ. 2ին, յայտարարեց Պետքազմարչութիւնը թէ կալանաւորուած եմ: Խուզարկուեցաւ սենեակս. ձեռագիր աշխատութիւնքս եւ գրքերս ոստիկանատուն տարուեցան: Անկնկալ չէր ինձ կալանաւորութիւնս. հանդիտ սրտով հետեւեցայ զիս ձերբակալողներուն:

Այսպէս խամբեցան դուարթ տեսիլներս մօտաւոր ապագայի. վրիպեցան սրբազան իղձերս իրենց նպատակէն:

1924 Ապրիլ 1—1928 Ապրիլ 27 հնարաւոր եղաւ ինձ ծանօթանալ ի մերձուստ

¹ Ծնորհակալութիւնս նաեւ հրատարակաւ Պր. Աբրահամ Պոյաճեանին ի Վիեննա, որ այս նպատակաւ տրամադրած էր ինձ հարիւր տոլար:

աւելի քան 5000 ձեռագիրներու: Հաւաքեցի այս ժամանակամիջոցի մէջ 10.000 գիրք, լրագիր եւ ձեռագիր: Ես կատարեցի ի սէր տոհմային գրականութեան այն ինչ կարելի էր տիրող պայմաններու մէջ. թերեւս ի գլուխ հանեցի եւ աւելին քան հնարաւոր կ'ընէր ժամանակը: Եթէ ընդհատեցաւ աշխատանքս, պատճառը եռանդիս նուազութիւնը չէր, որ պատրաստ է եւ այժմ շարունակել սկսուած գործը, աննկուն ամէն դժուարութիւններու առջեւ:

*

Բովանդակ Հայաստան, քաղաք կամ գիւղ, ուր եղած եմ ես, կարող է վկայել, թէ որքան ուղիղ ընթացած եմ իմ ճանապարհիս վրայ: Քայլերս համաձայն էին պետական քայլերգին. օրէնքը իմ ուղեցոյցս էր. իբրեւ քաղաքացի գիտէի տալ զկայսերն կայսեր. բայց իբրեւ Եկեղեցական գիտէի նաեւ ըստ կոչմանս բարձրութեան տալ զԱստուծոյն Աստուծոյ: Եւ ոչ ոք չխանգարեց զիս ուղիղ ճանապարհիս վրայ: Մօտ էի պետական Հիմնարկութիւններուն, ընտանի էի քաղաքներուն եւ շինականին, որոնք կը մեծարէին իմ մէջ եւ վարդապետը եւ հայրենասէրը եւ բանավարդապետը եւ հայրենապաշտը եւ սէրը: Ամէն տեղ վայելած եմ յարգանք եւ սէր հայրենի. չունէի թշնամի, մրցակից, նախանձորդ: Աննախանձ մասնակից կ'ընէի հետաքրքրուողները ձեռագրական նորութիւններուս, կը ջանայի դոհացնել հարցասէր մտքերը: Հաճելի էին ինձ ինչպէս մտաւորականներու, նոյնպէս անուսում հայրենակիցներու շրջանակները: Ո՛րքան քաղցր էին ինձ այն ժամանակները, զոր ես կը վայելէի հայ գիւղացիներու երգիքին տակ, փէխի ցաւեր եւ ես կը սիրովիէի: Եւ այս ամէնը ամենամաքուր զգածումներով: Հայ գիւղերու մէջ կը պատահէին եւ առիթներ, երբ ժողովուրդը կը ցանկար հոգեւոր մխիթարութիւն եւ ես կը ջամբէի առտնին միտաբարակաւ. բայց ոչ ոք չմեղադրեց եւ հրապարակաւ. բայց ոչ ոք չմեղադրեց զիս, թէ կը մեղանշեմ այսու. որովհետեւ հետո էր ինձմէ ամէն քաղաքական ձգտում. իբրեւ հայ մարդ կ'ապրէի հայ շրջանակի մէջ:

Ունէի Երեւանի մէջ փոքրիկ, աղքատիկ Մատուռ մը, բացուած գիտութեամբ եւ գրաւոր թոյլատուութեամբ Կառավարութեան. ուր կը հովուէի կիրականօրեայ այցե-

միթէ յանցանք է ճշմարտութիւնը խոստովանել հրապարակաւ:

«Ազատ Եկեղեցի» եւ «Պայքար» թագուն զիտաւորութիւններ կը տեսնեն նաեւ իմ էջմիածին եւ Երեւան տարած աշխատանքներու մէջ. այս ինքն զրականութեան քողին տակ կրօնական գործունէութիւն: Եթէ անոնք այնքան սրատես են, գաղտնի տեսնելու, ինչո՞ւ կը կուրանան յայտնին նշմարելու: Շարաթը 6 օր Մատենադարանին եւ ապա դրօքն փակելովք փոքրիկ խցիկանս մէջ պարապմունքներու անգիտակ, գրապահաստներու փոշիներու մէջ պրպտումներու անձանօթ, ահարեկեալ կը հետեւին իմ քայլերուս դէպի Երեւան: Եթէ անձնատուր էի բանասիրական աշխատանքներուս, բայց զիտակից էի միաժամանակ իմ հոգեւոր կոչմանս: Միւթարութիւն տալ ժողովրդեան իւր հոգեւոր կարիքներու մէջ, այդ իմ սրտի ամենամեծ հաճոյքն էր, ե՛ւ աշնանային փոշեթաթախ ճանապարհներու ե՛ւ կարածմեռն ձմեռուան ձիւնալից սառցապատ դաշտերու վրայ: Անոնք քաջ ծանօթ են կիրակնօրեայ քարոզներուս, ուղղուած հայ կաթողիկէ ժողովրդեան: Իսկ եթէ այս առթիւ 1925/1926ին պատահեցան դէպքեր, երբ հայ ժողովրդենէն ալ ոմանք փափազեցան անդամակցիլ Երեւանի փոքրիկ Մատուռիս, այդ ոչ թէ գործն էր իմ «պրոպագանդիս», այլ պարզապէս ինքնակամ մղումը ժողովրդեան, որ կա՛մ ժամանակի քոսային դրութեան ճնշման տակ սրտի աւելի սիւփանք գտնել կը յուսար աղքատիկ, անփառունակ, բայց բարեկարգ հայ Ազօթատանս մէջ, եւ կա՛մ թերեւս նիւթական շահի ակնկալութեամբ կը յայտնէր իւր փափազը: Բայց էր Մատուռս, ազատ մուտ եւ ելք ունէր. ինչո՞ւ փակէի դռները եւ խորող պարսաւուէի. կամ որո՞ւն անձանօթ էին իմ նիւթական անձկութիւններս³ եւ ինձմէ նիւթական շահ կ'ակնկալէր: Ի՞նչն էր հրապուրիչը. ի՞նչ նորաձեւ օտարուսում բան կը տեսնէր կամ կը լսէր այցելուն հոն: Կը յիշեմ միայն, որ մինչ Մատուռս խոնուած էր հաւատացողներով, հայկական մեծաշուք Եկեղեցիները թափուր էին ժողովրդե-

նէ: Այս մասին ո՛չ կալանաւորութենէս յառաջ եւ ոչ յետոյ դիտողութիւն եղած է ինձ կառավարութեան կողմանէ, որովհետեւ օրէնքի համաձայն էին քայլերս եւ անպարսաւ ընթացքս:

Բայց դարձանալի է «Ազատ Եկեղեցւոյ» (Երեւան) եւ «Պայքարի» (Բոստոն) նախանձախնդրութիւնը այս մասին: Առաջինը Մայր Աթոռի դարաւոր սիւներն հիմն ի վեր բրել կը ջանայ. եւ այս խղճի խայթ չէ իրեն. երկրորդը զիտէ Բապտիստներու եւ այլ բողոքական քարոզիչներու մոլեռանդ գործունէութիւնը չափոց մէջ, եւ ոչ մի երկիւղ չի զգար թէ կը տուժէ հայր թէ՛ իւր հաւատքը, թէ՛ աւանդութիւնները եւ թէ՛ ազգային Եկեղեցւոյ նկարագիրը: Երկուքն ալ կ'անտեսեն այն ահաւոր հոսանքը, որ ժողովուրդը դէպի անկրօնութիւն եւ անաստուածութիւն կը մղէ. եւ լուռ են: Բայց միաբերան ահազանդ կու տան ի տես Միւթարեանի մը գործունէութեան: Միւթարեանի՞ մը գործունէութիւնն է Հայոց Եկեղեցւոյն վտանգը: Բայց տեղւոյս չէ ծանրանալ այս կէտի շուրջը:

Յ. Ն. ԱԿՈՆՆԱՆ



ՅՈՒՑԱԿ ՀՈՅՆԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԱՅ ԸՆՉՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԵՒԲՏԵԱՆԻ Ի ՈՒՆԻԹՈՒՆ, ԿՆՍՍԱ

Եօթ կամ ութ տարուան ընթացքին մեծ գոհողութիւններով ի մի բերած հնազանդական հաւաքածոյիս մէջ կան շահեկան բազմաթիւ ձեռագիրներ, զորոնք անձնապէս ցուցակագրելով Հանդէսին միջոցաւ կը յանձնեմ բանասէրներու տրամադրութեան: Յուցակը պատրաստուած է Հ. Յ. Վ. Տաշեանի ուղղութեամբ: Չեռագիրները դասաւորուած են Այբբենական կարգով:

Թիւ 1:
Ա. Ի. Ն. Տ. Ա. Ր. Ա. Ն.
ՌՃԺԵ = 1666:

Մեծութիւն՝ 2, 1—2 × 3, 1—2 ինճեղ:
— Հաստութիւն՝ 2 ինճեղ: — Թերթք՝ 260¹:

¹ Պակաս կամ ինկած թերթերը չհաշուելով:

³ Այս շրջանին չունէի Արտասահմանէն որ եւ էջէ նպաստ. Պաւլոսի օրինակին հետեւելով, առանց որք «չահագործելու», ես ինքս կը հայթհայթէի օրպահարիկս պետական ծառայութեան մէջ: Ժողովուրդը չէր ծանրաբեռնուած ո եւ է տուրքով. Մատուռն ծախքերը կը հոգայի ինքս:

— էջք՝ 520: — Գիր՝ մանր բոլորգիր: — Գրութիւն՝ միասիւն: — Տողք՝ 14: — Նիւթ՝ մազազաթ, փայլուն բայց դեղնած: — Կազմ՝ հին, կաշեպատ փայտեայ, կոնակի կաշին պոկուած է ցոյց տալով կազմին կմախքը առանց կազմը քայքայելու: Կազմին մէջ ազուցուած են մետաքս կերպասի նրբահիւս երկու կտորներ: — Հանգամանք՝ լաւ թէեւ տեղ տեղ թերթերը, գրչութիւնը, եւ գեղեցիկ լուսանցազարդք փոքր ինչ վնասուած: — Խորագիր, վերնագիր եւ սկզբնատառք՝ կարմիր եւ կապուիւ, բազմաթիւ են սիրուն թուջնագիրք: — Լուսանցազարդ՝ թուով 196 հատ մանրանկար եւ ճաշակաւոր: — Խորանագարդ՝ մէկ հատ խոնաւութենէ ազատուած: — Պատկեր՝ մէկ հատ Յովհաննէս Առաքեալ: Այս մանրանկարը բացարձակապէս իտալական արուեստի ազդեցութեան նմոյշ մը: — Յիշատակարանք՝ էջ 291, 297, 515, 520, իսկ գլխաւոր յիշատակարանը է 517—519: — Տեղեկութիւն՝ ձեռագիրս հաւաքմանս մէջ մտած է 1926ի ուրիշ մէկ հայերէն եւ մէկ պարսկերէն ձեռագրի հետ, գնուած Նիւ Եօրք վաճառական Թ. է 175 տուրքի:

Մատենա եւ Աւետարան:

Կը սկսի Ղուկասու աւետարանով որուն սկիզբի մասը ինկած կորսուած է, եւ գրքիս Ա. թերթին տակ նշանակուած է նոր գրչէ «4»: Այսպէս բուն գիրքը կը սկսի հեւեւեալ հատուածով: — «... Եղիսարէթ: Եւ էին արգարք երկուքին առաջի Աստուծոյ, գնային յամենայն պատուիրանս եւ յիւրաւունս տեսնն անարատք»: Եւ կը վերջանայ էջ 291. «Աւետարան, ըստ Ղուկայ»:

էջ 292 կը սկսի «Յուցակը գլխաւորք սուրբ աւետարանին Յովհաննու» մինչեւ էջ 296ի ներքեւ: 298ին վրայ է գրքիս միակ մանրանկարը: էջ 299 կը սկսի ճոխ խորանով եւ լուսանցազարդով Յովհաննու աւետարանը: Եւ կ'աւարտի էջ 515:

էջ 516էն էջ 520 զանազան յիշատակարանք:

էջ 297. Կոչա ու նոր գրչէ նոսր գրով.
«Այս սուրբ աւետարան է յիշատակ, տէր վարդանի օվ որ կարգայ մէկ բերան ողորմի սասցէ ամէն գարձեալ յիշեցէք որդի օվանէսն որդի»

վարդանն նորայ հասակ յօնէփն տիրացու կարապետն մէկ բերան ողորմիս»:

էջ 516. Նոր եւ կոչա գրչէ երեք տող գրուած ջնջուած յետոյ նոսր գրով.

«Յիշատակ է այս աւետարան մահտեսի սարգս ին եւ իւր որդոցն եւ թոռանցն ամէն Աստուած ողորմի իրան»:

էջ 517. Գլխաւոր յիշատակարան էր գրչէն.

«Շնորհօք եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Գրիստոսի աւարտեցաք զյառաջարկեալ գործ ծրագրութեանս այսմ աստուածբուղիս եւ վարդապիթիթ մատենիս որ կոչի աւետարան, ի յերկրիս արարադեան, ընդ հովանեաւ սուրբ եւ գերահռչակ աթոռոյս էջ միածնի, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ, սրբազան Կաթողիկոսի ամենայն հայոց, եւ ի թագաւորութեան փոքր Շա հպասի, եւ ի թուարբրութեան հայ կազեն տուժարի ՌՃԺԵ ամի»:

էջ 518. Շարունակութիւն.

«Ձեռամբ մեղսամակարդ եւ թըւ ուսուցեալ Մարկոս արեղայի: յիշատակ անջինջ եւ մշտնջենաւոր մահտեսի Սարգսին, արդ ազա չեմ դձեղ ո՞վ հարք իմ եւ եղարք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահտեսի Սարգիսն եւ Աստուած ողորմի սասցէք նմա, վասն զի յոյժ սիրով ես գրել զսա եւ պահել առ իւր իբրեւ զորդեակ իւր հարազատ ի կենդանութեան իւրում, եւ յետ մահուան իւրոյ յիշատակ բարի եւ յախտենական, վասն յորոյ կրկին ազաչեմ զձեզ որք հան»

էջ 519. Շարունակութիւն.

«Գիպիք ամա լի սրտով ողորմի սասցէք մահտեսի Սարգսին եւ որ առատն է ի տուրս բարեաց